ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 671 - Ա

30 նոյեմբերի 2021 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-Ի N 245-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի և «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2021 թվականի մայիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմինների՝ առանձին և միացյալ խորհուրդների ցանկն ու կազմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի հունիսի 17-ի ու հունիսի 18-ի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 245-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ որոշման N 2 հավելվածի 45-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լիճքի Հովհ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի կազմում

1) «Խալոյան Վահան Մանվելի /վերադասի ներկայացուցիչ/» բառերը փոխարինել «Զուլոյան Ռուբեն Սերյոժայի /վերադասի ներկայացուցիչ/» բառերով.

2) «Սիրականյան Սիրական Իզմիրի /ԿԳՄՄՆ ներկայացուցիչ/» բառերը փոխարինել «Սարդարյան Արտաշ Սարգսի /ԿԳՄՄՆ ներկայացուցիչ/» բառերով:

30.11.2021

ՌՈՒԲԻԿ ՆԱՎՈՅԱՆ

Digitally signed by NAVOYAN RUBIK 3708540077

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
Ռ. ՆԱՎՈՅԱՆ

ք. Գավառ